«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 9
13.05.2022թ.

1. Համալսարանի ստորաբաժանումներում 2021-2022 ուս. տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պարապմունքների կազմակերպման, ընթացիկ քննությունների անցկացման ընթացքի, ի հայտ եկած խնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ.

1.1. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին.

- սեղմ ժամկետում քննարկել և բացահայտել «Անասնաբուծության հիմունքներ» առարկայի ցածր առաջադիմության պատճառները,
- սեղմ ժամկետում քննարկել, վերանայել ուսանողների գիտելիքի գնահատման սանդղակները (5; 20; 100),
- սեղմ ժամկետում քննարկել ՀՈՒ դեպարտամենտում մոդուլային առարկաների քննությունների կազմակերպման խնդիրները և կայացնել համապատասխան որոշում:

1.2. Հանձնարարել ԱԲԱՖ դեկան Ա. Աբովյանին մեկ շաբաթյա ժամկետում մշակել ու ներկայացնել Անասնաբուժական գիտակթական կենտրոնում կազմակերպվող կարճաժամկետ դասընթացների, այդ թվում՝ «Վայրի կենդանիների անասնաբուժություն» առարկայի մոդուլները, կլինիկայի կողմից մատուցվող ծառայությունների գնացուցակները:

1.3. Հանձնարարել ՊՏՖ դեկան Ս. Դավեյանին, աշխատակազմի ղեկավար Լ. Մնացականյանին և Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի վարիչ Վ. Ալեքսանյանին սեղմ ժամկետում կատարել ՊՏՖ կողմից կազմակերպվող կարճաժամկետ դասընթացների ֆինանսական հաշվարկները:

2. Սիսիանի և Շիրակի մասնաճյուղերում ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակի վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

3. ՀԱԱՀ ռեկտորատի որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

4. ՀԱԱՀ ռազմավարական գործողությունների պլանի ցուցիչների և ինստիտուցիոնալ հավատարմագրման համատեքստում հաստատված «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի» կատարողականի վերաբերյալ.

4.1. Հանձնարարել ՈԳԱ կենտրոնի տնօրեն Լ. Զաքարյանին, դասալսումների ընթացքում բացահայտված թերացումները սեղմ ժամկետում ներկայացնել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին:

4.2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին, դեկաններին և իրավաբանական բաժնի պետ Մ. Վարդանյանին, սեղմ ժամկետում քննարկել անպարտաճանաչ դասախոսների հարցը և կայացնել համապատասխան որոշում:

4.3. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին և աշխատակազմի ղեկավար Լ. Մնացականյանին «Ոսկե հասկ» մրցանակաբաշխության շրջանակներում վերականգնել «տարվա լավագույն դասախոս» անվանակարգը:

5. Մագիստրատուրայի «Ճշգրիտ գյուղատնտեսություն» մասնագիտության գնահատման համակարգի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց մագիստրոսական կրթության համակարգում «Ճշգրիտ գյուղատնտեսություն» մասնագիտության գնահատման համակարգի ընտրությունը թողնել «Արևմտյան Մակեդոնիայի» համալսարանի դասավանդող պրոֆեսորների հայեցողությանը, իսկ ՀԱԱՀ գնահատման համակարգից տարբերություններ ի հայտ գալու դեպքում, դրանք ՀԱԱՀ գնահատման համակարգին համապատասխանացնելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնել ՀԱԱՀ գիտխորհուրդ:

6. ՊՏ ֆակուլտետի ՊՓ 3-րդ կուրսի ուսանող Էդուարդ Ստեփանյանին քննությունները վաղաժամ հանձնելու հնարավորություն ընձեռելու հարցի վերաբերյալ.

ՊՏ ֆակուլտետի ՊՓ 3-րդ կուրսի ուսանող Էդուարդ Ստեփանյանին ընձեռել հնարավորություն վաղաժամ հանձնելու քննական վեց առարկաներից երեքը:

7. Վանաձորի մասնաճյուղի՝ ՌԴ-ում գտնվող երեք ուսանողների՝ քննաշրջանին մասնակցության հարցի վերաբերյալ.

Առաջնորդվել սահմանված կարգով:

8. ՀՈՒ դեպարտամենտի ուսանողների համար ուսման վարձավճարի զեղչ սահմանելու հարցի վերաբերյալ.

8.1. Հեռակա ուսուցման դեպարտամենտի 2021-2022 ուս տարվա 2-րդ կուրսի ուսանող Աղասի Մինասի Կարապետյանի երկրորդ կիսամյակի ուսման վարձը զեղչել 30%-ով:

8.2. Հեռակա ուսուցման դեպարտամենտի 2021-2022 ուս տարվա Ագրոբիզնես 5-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող Գևորգ Սարգսի Գևորգյանի ուսման վարձը զեղչել 20%-ով:

9. ՀՈՒԴ Սննդամթերքի անվտանգություն 2-րդ կուրսի ուսանող, 44-օրյա պատերազմի մասնակից, 2-րդ կարգի հաշմանդամ Մարտին Մաթևոսի Հովհաննիսյանին անհատական գրաֆիկով քննություններ հանձնելու հնարավորություն ընձեռելու հարցի վերաբերյալ.

ՀՈՒԴ Սննդամթերքի անվտանգություն 2-րդ կուրսի ուսանող Մարտին Մաթևոսի Հովհաննիսյանին ընձեռել քննություններն անհատական գրաֆիկով հանձնելու հնարավորություն:

10. ՀՈՒԴ Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն մասնագիտության 1-ին կուրսից համալսարանից հեռացված Նարեկ Վաղարշակի Խաչատրյանի ուսանողական իրավունքները վերականգնելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ-ից հեռացված Նարեկ Վաղարշակի Խաչատրյանի ուսանողական իրավունքները վերականգնել և ձևակերպել «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտության 2021-22 ուս. տարվա 1-ին կուրսում:

11. Ա. Քոչինյանի անվան գ/տ քոլեջի «Ֆինանսներ» 1-ին կուրսի ուսանող Դանիել Հայրապետյանի ուսման վարձի զեղչ սահմանելու համար՝ ՀՀ ԿԳՄՍՆ կողմից ստացված միջնորդության վերաբերյալ:

Տեղեկացնել քոլեջի «Ֆինանսներ» 1-ին կուրսի ուսանող Դանիել Հայրապետյանի ծնողին և ՀՀ ԿԳՄՍՆ-ին, որ «Գուրգեն Մելիքյան» բարեգործական հիմնադրամից փոխանցվել է ուսանող Դանիել Հայրապետյանի վարձավճարի ողջ գումարը:

12. ՀՈՒԴ նախորդ տարիներին համալսարանից հեռացված ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման հարցի վերաբերյալ:

Առաջնորդվել գործող կանոնակարգերով:

13. Համալսարանի տարբեր ստորաբաժանումների կողմից ձևակերպվող հրամանների՝ իրավական ակտերի ձևաչափին անհամապատասխանության հարցի վերաբերյալ.

Հանձնարարել իրավաբանական բաժնի պետ Մ. Վարդանյանին սեղմ ժամկետում վերանայել համալսարանի ստորաբաժանումների կողմից ձևակերպվող հիմնական հրամանների ձևաչափերն ու համապատասխանեցնել ձևակերպման սկզբունքներին: Հրամանների տեքստի խմբագրման աշխատանքները հանձնարարել հայոց և օտար լեզուների ամբիոնին:

14. Նախորդ տարիներին համալսարանից հեռացված կամ դուրս մնացած ուսանողների (ովքեր կրեդիտային համակարգով չեն սովորել) ուսանողական իրավունքները վերականգնելուց և համալսարանն ավարտելուց հետո ավարտական փաստաթուղթ տրամադրելու խնդիրների վերաբերյալ.

Պետական քննական հանձնաժողովին (ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին) տալ իրավասություն՝ տեսական կուրսն ավարտած ուսումնական պլանի հիման վրա շնորհել որակավորում ոչ թե կրթական ծրագրի, այլ մասնագիտության համար, իսկ դիպլոմի ներդիրը տալ՝ համաձայն նախկին ուսումնական պլանի և ուսանողի կողմից ուսումնառած առարկաների՝ չնշելով կրեդիտներ:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ